# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48 , Հեռ. 060517670, էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 ՀՈՒԼԻՍԻ 2020ԹՎԱԿԱՆԻ N 144**

## «ԱՐՏԱՇ ԳԵՎՈՐԳՅԱՆ» ՍՊԸ-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 55-Ն **որոշման պահանջներով**, ինչպես նաև **հիմք** ընդունելով «Արտաշ Գևորգյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ**.

1. «Արտաշ Գևորգյան» ՍՊԸ-ին տրամադրել ոգելից խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն '2020 թվականի 3-րդ եռամսյակի 72 օրվա համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2020 թ.հուլիսի 20
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 կ փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 145

## ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 03-Ի ԹԻՎ 140 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով **որոշում եմ**

Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 03-ի «Ինքնակամ կառուցված շինության օրինականացման մասին» թիվ 140 որոշումը ճանաչել ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2020թ. հուլիսի 21
գ.Վերին Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ
## 21 ՀՈՒԼԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 146

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1 կետերի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Ռոման Դադայանի դիմումը, համայնքի կադաստրային քարտեզը, <<Գեոլենդ>> ՍՊԸ-ի կողմից 01.07.2020 թվականին հաստատված հողամասի և շինությունների հատակագծերը, «Հաքչին Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից 14.07.2020 թվականին հաստատված տեխնիկական եզրակացությունը, ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 21.07.2020 թվականի դրական դիրքորոշումը, ինչպես նաև տեղում կատարված ուսումնասիրությունը, որ ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք` ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Ռոման Դադայանին սեփականության իրավունքով պատկանող, Վերին Պտղնի <<Նոր>> թաղամաս, 1-ին փողոց, թիվ 41 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 555.54 քմ հասարակական շինությունը` սպասարկման օբյեկտը համարել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի բյուջեի N 900105231212 հաշվեհամարին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված հասարակական սպասարկման օբյեկտի համար 2 888 800 / երկու միլիոն ութ հարյուր ութսունութ հազար ութ հարյուր դր / ՀՀ դրամ օրինականացման վճարը:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2020թ.հուլիսի 21
գ.Վերին Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mia.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**21 ՀՈՒԼԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 147**

**ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի բ) կետով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 30.06.2020 թվականի թիվ 321 գրությամբ նախազգուշացումը՝ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնքի սեփականություն հանդիսացող 07-062-0105-0051 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակությամբ այլ հողեր գործառնական նշանակությամբ 1.35 հա մակերեսով հողամասը Գագիկ Ծառուկյանի կողմից ինքնակամ զավթումից ազատելու, ինքնակամ տեղադրած ցանկապատը ապամոնտաժելու՝ այսինքն արարքի հետևանքները վերացնելու մասին, **որոշում եմ**.

1. Գագիկ Ծառուկյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2020 թվականի հուլիսի 27-ին, ժամը 12:00-ին:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Գագիկ Ծառուկյանին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Գ.ՊՈՂՈՍՅԱՆ**

2020 թվական հուլիսի 21

գ. Վերին Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinpighni.kotayq@mia.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ
## 21 ՀՈՒԼԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 148

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի պահանջը, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14$^{2}$ հոդվածի 5-րդ կետի պահանջներով , Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով ինչպես նաև Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 10-ի թիվ 28-Ա որոշման պահանջը, **որոշում եմ**

Փոփոխել քաղաքացի Սարգիս Մկրտչյանի սեփականություն հանդիսացող կադաստրային ծածկագիր 07-062-0201-0011 գյուղատնտեսական նշանակության 0.08 հա վարելահողի նպատակային նշանակությունը **բնակավայրերի**, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2020թ.հուլիսի 21
գ.Վերին Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 3-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ
## 21 ՀՈՒԼԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 149

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի պահանջը, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14$^3$ հոդվածի 5-րդ կետի պահանջներով , Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով ինչպես նաև Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 10-ի թիվ 28-Ա որոշման պահանջը, **որոշում եմ**

Փոփոխել համայնքային սեփականություն հանդիսացող 07-062-0201 կադաստրային ծածկագրով հողամասից 0.05467 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2020թ. հուլիսի 21
գ.Վերին Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

22 ՀՈՒԼԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 150

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով որոշում եմ.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր 07-062-0201- / 0.05467 հա հողամասին և նրա վրա գտնվող շինություններին տրամադրել հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, Նորավան թաղամաս 4-րդ փողոց , 1-ին նրբանցք, 1-ին փակուղի թիվ 13 ։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2020 թ. հուլիսի 22
գ.Վերին Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mia.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**22 ՀՈՒԼԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 151**

## ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՐԳԻՍ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով որոշում եմ.

1. Քաղաքացի Սարգիս Մկրտչյանին սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր 07-062-0201-0015/ 0.140 հա հողամասին և նրա վրա գտնվող շինություններին տրամադրել հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, Նորավան թաղամաս 4-րդ փողոց , 1-ին նրբանցք, 1-ին փակուղի թիվ 11 ։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2020 թ. հուլիսի 22
գ.Վերին Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ
**22 ՀՈՒԼԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 152**

## ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՐԳԻՍ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով որոշում եմ.

1. Քաղաքացի Սարգիս Մկրտչյանին սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր 07-062-0201-0011/ 0.080 հա հողամասին և նրա վրա գտնվող շինություններին տրամադրել հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, Նորավան թաղամաս 4-րդ փողոց , 1-ին նրբանցք, 1-ին փակուղի թիվ 9 :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2020 թ. հուլիսի 22
գ.Վերին Պտղնի